

Տիկնա՛յք և պարոնա՛յք,

կա պատմություն, որը կրկնվում է, և կան ժողովուրդներ, կան ազգեր, որոնց համար պատմությունը կրկնվում է հատկապես ողբերգական եղանակով: Հայաստանում մարդկանց համար, Լեռնային Ղարաբաղում հայերի և հայկական սփյուռքի համար նույնպես կրկնվում է մի սարսափելի պատմություն: Հայերին քշում են իրենց բնիկ հայրենիքից, և ով չի հասցնում ժամանակին փախչել, սպանվում է, ումբակոծվում (նաև կասետային ռումբերով), հրետակոծվում անօդաչու թռչող սարքերից կամ նույնիսկ գլխաստվում: Վիրավորներին հնարավոր չէ բուժել, կանայք ու երեխաները զոհերի ամենամեծ խումբն են: Եվ, ինչպես միշտ, իրենց պատմությունում հայերը մենակ են մնացել: Աշխարհը, նաև իրեն «քաղաքակիրթ» կոչող աշխարհը, փախցնում է հայացքը, ինչպես արդեն 1915-ին Օսմանյան կայսրությունում հայերի կոտորածների ժամանակ կամ ինչպես անթիվ պոզրոմների ժամանակ դրանից առաջ, բայց նաև դրանից հետո:

Մենք այսօր խոսում ենք պատերազմի մասին Լեռնային Ղարաբաղում և հայերի տեղահանման մասին մի տարածաշրջանից, որում, ինչպես սպացուցված է, ավելի քան 2 000 տարի ի վեր հայկական քաղաքակրթություն և մշակույթ կա: Այդ Լեռնային Ղարաբաղը կանաչ օազիս է Հարավային Կովկասում, բնությամբ այն հիշեցնում է կենտրոնական Իտալիան:

Մենք այս երկար հակամարտությունում ո՛չ կողմ ենք և ո՛չ էլ՝ միջնորդ դատավոր: Մենք հեռու ենք դրանից, ցավոք, նաև զգացմունքային առումով: Տիկնայք և պարոնայք, անշուշտ, գոյություն ունի հեռավոր ցավ, բայց չի լինում օտար ցավ: Մենք կարեկցում ենք մարդկանց, որոնք Ղարաբաղում են, կարեկցում ենք քաղաքացիական և ռազմական զոհերին: Ես ավելացնում եմ դրան. 30 տարի առաջ իրենց հայրենիքից փախած կամ տեղահանված աղբյուրներիցիցիների ցավը հուզում է մեզ և տխրեցնում, և մենք դատապարտում ենք բռնությունը, որը երկու կողմերից էլ ուղղվում է քաղաքացիական բնակչության դեմ:

(ՔԴՄ/ՔՄՄ և Մոցիալ-դեմոկրատական կուսակցության պատգամավորների ծափեր)

Շատ հաճախ են հիմա դիմում միջազգային իրավունքին՝ մատնանշելով, որ Ղարաբաղը գտնվում է Աղբյուրների միջազգային իրավունքով ճանաչված սահմանների ներսում: Մտադրություն չկա դա հարցականի տակ դնելու: Սակայն ով պատմության մեջ պետական իրավունքով է կողմնորոշվում (ոմանք խոսեցին այդ մասին), կբախվի բազմաթիվ անհեթեթությունների, օրինակ, Ստալինի՝ մի ձեռքի

շարժումով 1921-ին կատարած տեղաբաշխմանը: Ավելի մանրամասնորեն միջազգային իրավունքի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի միջև հարաբերակցությանն անդրադառնալու համար այստեղ ժամանակ չկա: Սակայն այնքան ժամանակ կա, որպեսզի ասեմ, որ պատերազմն ու ահաբեկչությունը միջազգային իրավունքի վատթարագույն խախտումն են, և որ կա իր բնիկ հայրենիքում ինքնորոշված և խաղաղ կյանք ունենալու մարդու իրավունք:

Իսկ ինչպիսի՞ն կլինի շարունակությունը: Հնարավոր է, որ մի քանի շաբաթից բոլոր հայերը քշված լինեն Ղարաբաղից: Բայց, հավանաբար, նրանք կպաշտպանվեն, խրամատներ կմտնեն լեռնաշղթաներում և չեն թողնի, որ իրենց քշեն: Ադրբեջանն ուզում է ավարտուն փաստեր ստեղծել: Բայց խաղաղության չես կարող հասնել ռումբերով, և բարիդրացիական հեռանկար այսպես չի առաջանա: Ղարաբաղի վրա ընկնող յուրաքանչյուր նոնակ սերմացու է հաջորդ պատերազմի համար:

Պարոն Արտաքին գործերի նախարար, մենք սատարում ենք Ձեզ Ձեր ջանքերում, որպեսզի ամեն ինչ արվի, որ հակամարտության երկու կողմերը համաձայնվեն տեղում ԵԱՀԿ-ի լայնածավալ ներկայության միջոցով հրադադարի պահպանումը վերահսկելուն: Անհրաժեշտ է այնպիսի լուծում գտնել, որը հաշվի կառնի ինչպես տարածքային ամբողջականության նկատմամբ Ադրբեջանի արդարացված և միջազգային իրավունքի վրա հենվող շահագրգռվածությունը, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում մարդկանց, բնակչության ինքնորոշման իրավունքը: Հող խաղաղության դիմա՞ց: Հող ինքնորոշման դիմա՞ց: Այդպիսի փոխանակումը և համաձայնագիրն այդ մասին պարտադիր պետք է երաշխավորված լինեն համաշխարհային հանրության և խաղարար գործերի միջոցով:

Իսկ մե՞նք: Ճիշտ կլինի, որ մենք առնվազն չկրկնենք մեր 1915-ի սխալը, չմատնենք լռության անարդարությունը: Ճիշտ կլինի, որ մենք անարդարությունը անարդարություն անվանենք և պատժենք: Եվ Ճիշտ կլինի, որ մենք արդեն այսօր նախաձեռնենք Լեռնային Ղարաբաղի վերականգնման նպատակով դոնորների համաժողով: Մենք կոչված ենք ամեն ինչ անելու, որպեսզի պատմությունը չկրկնվի. չէ՞ որ մենք էլ 1915-ի հետ կապված հատուցելիք ունենք:

Շնորհակալություն: